

Խելամիտ Հարմարություններ և Խելամիտ



Իրավաբանական Սահմանումներ

Ի՞նչ է հաշմանդամությունը:

Հաշմանդամությունը ֆիզիկական, հոգեկան կամ իմացական վիճակ է, որը ստեղծում է դժվարությունն քո համար անելու կյանքի մեկ կամ ավել հիմնական գործողությունները:

Ի՞նչ է խելամիտ հարմարությունը

Եթե դուք չեք կարող օգտագործել կամ վայելել ձեր տունը հաշմանդամության պատճառով, դուք կարող եք ձեր տանտիրոջը ասել փոխելու կանոնակարգը կամ պրակտիկան, որը ձեր տանտերը սովորաբար անում է: Օրինակի համար, եթե դուք ունեք իրավիճակ, որը ստեղծում է դժվարություն ձեր համար բնակարանը պահել մաքուր և ձեր տանտերը ասում է ձեզ մաքրել ձեր բնակարանը, դուք կարող եք պահանջել ձեր տանտիրոջից ավել ժամանակ: Ուրիշ օրինակ՝ կարող եք պահանջել տեղափոխվելու առաջին իսկ ազատված բնակարանում, որը առաջին հարկում է, եթե դուք չեք կարող օգտագործել ձեր շենքի աստիճանները ձեր հաշմանդամության պատճառով:

Ի՞նչ է խելամիտ փոփոխությունը

Դուք միգուցե պահանջեք ֆիզիկական փոփոխության ձեր տանը, որը թույլ կտա ձեզ օգտագործել և վայելել ձեր տունը: Սա կոչվում է խելամիտ փոփոխություն: Օրինակի համար, եթե դուք օգտագործում եք անվասայլակ, միգուցե դուք կարիք ունենաք տեղադրել թեքահարթակ մտնելու ձեր տուն: Դուք միգուցե վճարեք խելամիտ փոփոխության համար, բայց դուք միգուցե կարողանաք ստանալ օգնություն այս ծախսերի համար:

Տանտիրոջ Պահանջները

Ձեր տանտերը չի կարող խտրականություն դնել ձեր հանդեպ կամ ձեզ վերաբերվել անարդարացիորեն, որովհետև դուք ունեք հաշմանդամություն: Դա նշանակում է ձեր տանտերը չի կարող՝

- Հրաժարվել վարձակալել կամ վաճառել տունը ձեզ, որովհետև դուք ունեք հաշմանդամություն
- Հրաժարվել, երբ դուք պահանջում եք խելամիտ հարմարություն կամ փոխելու ձեր տանտիրոջ կանոնները
- Հրաժարվել, երբ դուք պահանջում եք խելամիտ փոփոխություն կամ փոխելու ձեր վարձակալած տունը

Ե՞րբ է Հարմարությունը կամ Փոփոխությունը խելամիտ:

Պահանջը պետք է ուղղակիորեն կապված լինի հաշմանդամությանը: Դա չպետք է շատ դժվար կամ շատ թանկ լինի տանտիրոջ համար անելու դա: Դա չի կարող պահանջել տանտիրոջից հիմնովին փոխել իրենց բիզնեսը և դա չի կարող վտանգել ուրիշների առողջությանը կամ անվտանգությանը:

Պահանջը կարող է լինել խելամիտ եթե՝

- Դուք պահանջում եք բերել ծառայողական կենդանի “կենդանիներ չկան” կանոնադրությամբ շենքում:
- Դուք պահանջում եք ավելացել ապրող օգնական ձեր պայմանագրում:
- Դուք պահանջում եք տեղադրել ձող ձեր լոգարանում, որովհետև ունեք ֆիզիկական հաշմանդամություն և դուք վախենում եք սահելուց:

Պահանջը կարող է լինել ՈՉ խելամիտ եթե՝

- Դուք պահանջում եք շուն բերել շենքի մեջ, բայց շունը վտանգավոր է մյուս վարձակալների համար:
- Դուք պահանջում եք ավելի մեծ պատուհաններ, որ շատ լույս կարող է մտնել բնակարանի մեջ:

Ինչպես Պահանջել

Ինչպե՞ս ես պահանջեմ խելամիտ Հարմարություն կամ Փոփոխություն

1. Պահանջիր խելամիտ հարմարություն գրավոր և պահիր կրկնօրինակը: Ձեր պահանջը պետք է կապված լինի ձեր հաշմանդամությանը: Եթե դուք պահանջել եք խելամիտ հարմարություն անձամբ կամ հեռախոսով, հետո ուղարկեք նամակ կամ էլեկտրոնային նամակ:
2. Վերցրեք նամակ ձեր բժշկից, թերապևտից կամ սոցիալական աշխատակցից, որը բացատրի, որ դուք ունեք հաշմանդամություն և ինչու է ձեր պանանջը անհրաժեշտ: Նամակը կարիք չունի նշի, թե ինչ է ձեր հաշմանդամությունը: Օրինակի համար ձեր բժիշկը կարող է բացատրել, թե հաշմանդամության պատճառով դուք ունեք խնդիր հիշելու բաներ, այնպես որ դուք խնդրում եք, որ ձեր տանտերը ուղարկի նամակներ ձեր վարձակալության մասին ձեզ և ձեր քրոջը:

Խնդրեմ կարդացեք նամակի օրինակը:

Կարո՞ղ եմ ես պահանջել խելամիտ հարմարություն, եթե ես վտարվում եմ:

Դուք կարող եք պահանջել խելամիտ հարմարություն որևէ ժամանակ: Դուք կարող եք նույնիսկ պահանջել խելամիտ հարմարություն, եթե ձեր տանտերը փորձում է վտարել ձեզ: Եթե դուք կարծում եք, որ դուք կարող է վտարվեք ձեր հաշմանդամության պատճառով, դուք պետք է զանգահարեք իրավաբանական օգնության:

Օգնություն ձեր խելամիտ հարմարության պահանջի դեպքում՝
Չանգահարել Լոս Անջելես Շրջանի Իրավաբանական Ծառայություններ
800-433-6251 համարով, Բնակարանային Իրավունքների Կենտրոն
800-477-5977 կամ կապնվել ուրիշ անվճար իրավաբանական
ծառայություններին մոտիկ ձեր տանը:

Դուք նույնպես կարող եք ֆայլ անել բողոք California Department of Fair Employment and Housing (DFEH)-ում: Եթե դուք պահանջում եք հարմարություն կամ փոփոխություն և եթե ձեր տանտերը չի տալիս պատասխան կամ ասում է ոչ, դուք կարող եք ֆայլ անել բողոք DFEH-ին առցանց կամ հեռախոսով՝ (800) 884-1684:

ԽԵԼԱՄԻՏ ՀԱՐՄԱՐՈՒԹՅԱՆ ՊԱԿԵՏ

Ամսաթիվը _____

Տանտիրոջ կամ կառավարիչի անունը _____

Տանտիրոջ կամ կառավարիչի հասցեն _____

Քաղաքը, նահանգը, և փոստային ինդեքսը _____

Սիրելի _____

Սա պահանջ է խելամիտ հարմարության համար:

Դաշտային Fair Housing Act-ը, California Fair Employment և Housing Act-ը, և Unruh Civil Rights Act-ը պահանջում են, որ տանտերը կատարի խելամիտ հարմարություններ, երբ հարմարությունը տրվում է հաշմանդամ անձին հավասար բնակարանային հնարավորության համար:

Տեղավորման պարտականությունը պահանջում է ինտերակտիվ պրոցեսներ, այնպես որ, եթե համաձայն չեք իմ պահանջի հետ, ես կցանկանայի խոսել ձեր հետ այդ մասին, որ մենք կարողանանք միասին համաձայնության գալ խելամիտ որոշման հարցում:

Ես որակավորված հաշմանդամություններ ունեցող անհատ եմ, որովհետև իմ հաշմանդամությունը էապես սահմանափակում է իմ կյանքի մեկ կամ ավելի հիմնական գործողությունները: Ես պահանջում եմ, որ դուք հարմարեցնեք իմ հաշմանդամությունը՝

Իմ պահանջած հարմարությունը խելամիտ է և կթուլատրի ինձ իմ բնակարանի հավասար օգտագործումը և վայելումը:

Խնդրեմ հաշվի առեք այս խնդրանքը: Ես պահանջում եմ, որ դուք պատասխանեք ոչ ուշ քան երկու շաբաթում այսօրվա թվականից սկսած:

Հարգանքներով՝

Ստորագրել ձեր անունը, _____

Տպագրեք ձեր անունը, _____

Ձեր հասցեն, _____

Ես արել եմ այս նամակի կրկնօրինակը իմ ռեկորդների համար: